# «Հայոց ցեղասպանության, հայկական պահանջատիրության և արցախյան հիմնահարցի խաչմերուկներում. հետահայաց գնահատումներ և հեռանկարներ» գիտաժողովը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում

Ս.թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում շարունակվեց եռօրյա գիտաժողովը՝ նվիրված «Հայոց ցեղասպանության, հայկական պահանջատիրության և արցախյան հիմնահարցի խաչմերուկներում. հետահայաց գնահատումներ և հեռանկարներ» թեմային:

Գիտաժողովը համատեղ կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը, Երևանի պետական համալսարանի և Հայագիտական ուսմանց ընկերակցությունը:

Այսօր քննարկվեց «Հայրենազրկում և պահանջատիրություն. պատմահրավական գնահատականներ» թեման՝ Հայոց ցեղասպանության խնդիրը ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում, հայատյացությունը և ժխտողականությունը Թուրքիայում և Ադրբեջանում, Թուրքիայի ռազմական միջամտությունը 2020 թ.-ի Արցախյան պատերազմին, սփյուռքահայության գործունեությունը Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցում և այլ հարցեր:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը նշեց, որ առաջին անգամ արևմտահայության ցեղասպանության և Արցախի խնդիրները զուգահեռաբար քննարկվեցին մեկ գիտաժողովի շրջանակներում: «Արցախյան վերջին պատերազմը և Արցախի ներկայիս վիճակը ցույց տվեցին, որ Հայոց ցեղասպանության խնդիրը միայն արևմտահայության խնդիր չէ: Այն Արցախի հայության և Հայաստանի Հանրապետության արևելյան բնակավայրերի բնակչությանը վերաբերող և նրա գլխին որպես վտանգ կախված իրողություն է: Մենք խորապես համոզված ենք, որ եթե չլիներ ռուս խաղաղապահների հարցը օրակարգում, այս ամբողջը կարող էր արևելահայության համար ավարտվել նոր ցեղասպանությամբ: Խոսելով ցեղասպանության մասին՝ խոսում էինք Հայաստանի Հանրապետության անվտանգության մասին, աշխարհին հիշեցնում, որ մենք կրկին գործ ունենք նույն ցեղասպան Թուրքիայի և նրա աշակերտը հանդիսացող Ադրբեջանի հետ»,- վստահ է Աշոտ Մելքոնյանը:

Հիշեցնենք, որ գիտաժողովը մեկնարկել էր սեպտեմբերի 16-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, որտեղ մասնակիցները ծանոթացան «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի և Հայաստանի ազգային արխիվի համատեղ կազմակերպած «Հայոց պահանջատիրության հետքերով. հայերի մասնավոր և համայնքապատկան գույքի սեփականության վկայագրերը» խորագրով ժամանակավոր ցուցադրությանը:

Գիտաժողովը շարունակվեց սեպտեմբերի 18-ին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, որտեղ կայացան կլոր սեղաններ՝ «Ադրբեջանական իշխանությունների հայատյացության և ցեղասպան քաղաքականությունը ադրբեջանահայության և արցախահայության նկատմամբ», «Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը միջգիտակարգային տիրույթում», «Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գործընթաց. ձեռքբերումներ, խնդիրներ, սպասելիքներ», «Ցեղասպանության քաղաքականության դրսևորումները երկրորդ արցախյան պատերազմի ժամանակ» թեմաներով:

***ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն***